Եղեգան փող

Երևանի Ռաֆֆայել Իշխանյանի անվան
թ.153 միջնակարգ դպրոց

Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր. 2014թ. Մարտ

Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ…

Դանիել Վարուժան

«Մի աղոթքով հիշե՛ք անկատարիս»

Ռ.Իշխանյան

Անվանակիր դպրոցի առաքելությունը Իշխանյան անձի, քաղաքացու գործունեության լուսաբանումն է և ուսուցանումը՝նրա թողած ժառանգությունը պահպանելու նպատակով:

Դպրոցը այն պահից, երբ անվանակոչվեց Ռ.Իշխանյանի անունով, որդեգրեց քաղաքականություն. ամեն միջոցառման և ամեն օրվա հետ արժևորել Ռ.Իշխանյանին:

Նրա ժառանգությունը անսպառ է, և ամեն անգամ վեր հանելով մեկը իր տպագիր գրքերից, աշխատություններից, անտիկ ձեռագրերից, մենագրություններից, երբևէ չենք կրկնվելու: Իսկ նրա մարդկային նկարագիրը, նրա քաղաքացի կերպարը՝ իբրև մատենագետ և հայ մարդ,անընդհատ լուսաբանման կարիք ունի:: Այնպես որ ամեն անգամ անպառ հնարավորություն կունենանք պեղելու, նորը վեր հանելու:

Մարտի իննին Ռ.Իշխանյանի ծննդյան իննսուներկու ամյակն էր: Դպրոցը մշակել էր ծննդյան օրերի արժևորման ծրագիր:

Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ա.Հարությունյանը և դաստիարակության գծով փոխտնօրեն Ա.Դուրգարյանը կազմակերպել էին թատերական դրվագներով ներկայացում, որտեղ արժևորվել էին Իշխանյանի Տերյանը, Չարենցը, Սայաթ-Նովան, Թումանյանը, ստեղծվել էր գեղարվեստական ասմունքով և երաժշտական համարներով հարուստ մի գունապնակ: Միջոցառման յուրաքանչյուր դրվագին զուգահեռ ցուցադրվում էր թեմատիկ ֆիլմաշար՝մշակված ինֆորմատիկայի ուսուցչուհի Լ.Պողոսյանի կողմից :

Միջոցառմանը ներկա էր Իշխանյանի ընտանիքը: Ընտանիքի անդամներից ըուրաքանչյուրը դարձել է մեր մանկավարժական կոլեկտիվի լիիրավ անդամը, ապրում են մեր միջոցառումներով, մեր հևքով, մեր շնչով: Դպրոցի տնօրեն Ա.Սարգսյանը շնորհակալություն հայտնեց նրանց մշտապես դպրոցի կողքին լինելու համար: Գովեստի խոսքերի արժանացան նաև միջոցառման մասնակիցները.

-Աշակետրը անտաշ քար է. ինչպես հղկես, այնպես էլ կներկայանա աշխարհին: Ես ուզում եմ, որ այս մոտեցումով շարունակեք ապրել ձեր կյանքը: Որքան էլ նյութականը մխրճված լինի մեր մեջ, կյանքի շարժիչ ուժը հոգևորն է, դրական հոգևոր լիցքը, որ տալիս է գրքերի աշխարհը և ճիշտ կրթությունը,- ասաց դպրոցի տնօրենը:

Միջոցառման ավարտից հետո աշակերտական խորհուրդը ծնողական խորհրդի հետ մեկտեղ այցելեցին Ռ.Իշխանյանի շիրմին, և հնչեց երդումը.

Սիրել Հայաստան աշխարհը և հայոց լեզուն, հավատարիմ մնալ մեր հայրենիքին, հավատալ նրա ապագային և ապրել այնպես, որ չկրկնվեն անցյալի կորստաբեր սխալները:



-2-

«Մարդի՛կ, արևի նման նայեցե՛ք աշխարհին»

Հովհ.Թումանյան

«Ով չի ճաշակել թումանյանական երկերի հմայքը, նա բանաստեղծական աշխարհ չի տեսել»,- գրել է Ռ.Իշխանյանը: Հովհաննես Թումանյանի 145-ամյակին Ռ.Իշխանյանի հիմն. դպրոցում միջոցառումներով հանդես եկան բոլոր մասնախմբերը:

Պատահական չէ, որ ամեն տարի՝ փետրվարի 19-ին, տեղի է ունենում հայ գրականության օլիմպիադան. չէ որ այդ օրն է ծնվել ամենայն հայոց բանաստեղծ Հովհ.Թումանյանը: Այս տարի ևս օլիմպիադայի տարածքային փուլը տեղի ունեցավ մեր դպրոցում: Տարբեր դպրոցներից ժամանած օլիմպիադայի մասնակիցներին հաճելի անակնկալ էր սպասվում. թումանյանական կոլորիտով ձևավորված ճեմասրահում «Անուշ» օպերայի հնչյունների ներքո աշակերտներին ողջունեցին դպրոցի տնօրեն Ա.Սարգսյանը և քաղաքապետարանի կրթության վարչության աշխատակիցներ: Աշակերտները «վիճակ հանեցին» և ընթերցեցին իրենց բաժին հասած քառյակները: Թումանյանի կենսափիլիսոփայությամբ ոգևորված՝ օլիմպիադայի մասնակիցները սկսեցին իրենց աշխատանքները:

Հովհաննես Թումանյանի հեքիաթները մեզ սովորեցնում են…

Թումանյանի դերը մանկական գրականության հարստացման գործում հավասարը չունի: Նրա մանկական բանաստեղծությունները, հեքիաթները հայ երեխաների ամենասիրելի գործերն են:

Հովհ.Թումանյանի ծննդյան օրվա արժևորումը յուրահատուկ էր կրտսեր դպրոցում: Բեմ դուրս եկան կրտսեր դպրոցի բոլոր դասարանները:

1ա -Կիկոսի մահը

1գ-Ծիտը

1բ-Անհաղթ աքլորը

2ա- Քաջ Նազարը

2բ Անխելք մարդը

3ա - Քեֆ անողին քեֆ չի հասնի

IVբ դասարան

3գ- Հեքիաթների գունապնակ

Իսկ 4բ և 3բ դասարանները ներկայացրեցին դրվագներ գրողի կենսագրությունից:

Փոքրիկների անկաշկանդ խաղը հիացրել էր բոլորին. նրանք «մեծ» բեմի իսկական դերասաններ էին: Ինչպես նրանք են նշում. «Հովի. Թումանյանի հեքիաթները մեզ սովորեցնում են»: Հաջողակ անբանը քաջ Նազարն է, անհաջողակը՝ ձախորդ Փանոսը, ծույլը՝ անբան Հուռին, ստախոսը՝ սուտլիկ որսկանը և այլն: Թումանյանը մանկանը թոթովախոս հասակից ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում: Թումանյանական խոսքը լուսեղ է ու իմաստուն: Կարդալով, արտասանելով և երգելով Թումանյան՝ շարունակում ենք ազնվանալ ու մաքրվել ակունքի ջրի նման: Անսպառ է մեր ջերմ սերը նրա խոսքի նկատմամբ:

Թումանյանը նաև հայ լավագույն թարգմանիչն է:

Թումանյանին հիանալի թարգմանել է Ս.Մարշակը, որի «Մի կաթիլ մեղր» և «Շունն ու կատուն» ստեղծագործությունները փայլուն կերպով ներկայացրեցին Ռ.Իշխանյանի

անվան հիմն. դպրոցի VII^{ա} դասարանի աշակերտները՝ ռուսաց լեզվի ուսուցչուհի Գ.Պետրոսյանի գլխավորությամբ:

Անդրադառնալով վերոհիշյալ բոլոր միջոցառումներին՝ դպրոցի տնօրենը ասաց, որ մեր դպրոցի ճակատին պետք է գրվի գեղարվեստաթատերական թեքում ունեցող դպրոց: Գովեստի է արժանի դպրոցի ուսուցչական կոլեկտիվի աշխատանքը: Նրանք յուրահատուկ ջերմությամբ են վերաբերվում իրենց սաներին. չէ՞ որ նրանց աշխատանքով է պայմանավորված երեխայի վերաբերմունքը թե՛ դպրոցին, թե՛ կրթությանը:

Հովհ.Թումանյանը հայ ժողովրդի խոսքի լավագույն գրքեր ստեղծողն է: Իրևի սրանով է պայմանավորված, որ բանաստեղծի ծննդյան օրը հա-հայ ժողովրդի խոսքի գիրք նվիրելու օր է: Այդ օրը գեղեցիկ ամսկինպղով դպրոց այցելեցին ԼԳ Մաշտոցի բաժանմունքի աշխատակիցները:

Նրանք դասվա ընթացքում աջակցել են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին այսօր էլ ունեին իրենց ամսկինպղը. դպրոցի գրադարանին նվիրեցին գեղարվեստական գրքերի դրցակ: Նրանք ևս «վիճակ խանեցին» և դպրոցից կեռացան՝ խոգեցած թումանյանական կենսա-փիլիսոփայությամբ:



Բանակը մեր ազգի գոյատևման գլխավոր երաշխիքն է:

/Ռ.Իշխանյանի հ.153 հիմն. դպրոցի աշակերտական խորհրդի անդրադարձը քսաներկուամյա հայոց բանակի դարելիցին/

Անկախությունը ժողովուրդների հարա-տևության առաջին պայմանն է, իսկ անկախության ամենամեծ նվաճումը ազգային բանակն է: Բանակը մեր ապագայի երաշխավորն է ու հենարանը:

Ռ.Իշխանյանի հ.153 հիմն. դպրոցի աշակերտական խորհուրդը կազմակերպել էր միջոցառում՝ «Քսաներկուամյա հայոց բանակը խորագրով: Աշակերտները ցուցադրեցին թատերական հուզիչ դրվագներ,որի ժամանակ հանդիսատեսը չկարողացավ զսպել արցունքները, իսկ «կռվի դաշտում հաղթանակած զինվորների երգը» ոգևորեց դահլիճում ներկա գտնվող ազատամարտիկներին, և նրանք հայտնվեցին

բեմահարթակին՝ երգող աշակերտների կողքին:

Ավաղ, դաժան է պատերազմի դեմքը, այդ պատերազմում շատ էին չվերադարձած և հավերժ երիտասարդ մնացած այն զինվորները, որոնց շարքում էին նաև մեր դպրոցի սաները՝ Ալեքսանդր Հովհաննիսյանը, Լևոն Հովհաննիսյանը, Վահագն Բարսեղյանը:


Վահագն Բարսեղյան



Հանդիսատեսը մեկ րոպե լռությամբ հարգեց պատերազմում զոհվածների հիշատակը:

Նրանք ապրում են,

Դուք փնտրեք նրանց բացվող օրերի ժպիտներում ջինջ,

Մեղմիկ ալիքվող կանաչ արտերում,

Շրշյուններում տաք:

Դուք նրանց փնտրեք հաղթանակների ճանապարհներին,

Քանզի նրանք կան, ապրում են նրանք:

Միջոցառման ավարտին բեմ դուրս եկան Հաաստանի ապագան խորհրդանշող առաջին դասարանի տղաները.

Հայաստանը մենք ենք

Ու եկ միասին ցնծաձայն գոչենք,

Այնպես ,որ լսեն ժողովուրդները

Ամբողջ աշխարհի,

Ու քաջ է, անվախ ու անկոտրում է

Մեր ոգին հայի:

Որ պիտի ծաղկի ու պիտի թնդա հողը հայրենի,

Եվ պիտի հնչի, հավետ կարկաչի

Լեզուն մայրենի:

Բանակը մեր գոյատևման գլխավոր երաշխիքն է: Մենք մայրական կաթի հետ պետք է յուրացնենք կռվելու արվեստը, ճանաչենք մեր թշնամիներին: Դա պետք է դառնա ազգային մտածողություն, ազգային հոգեբանություն, մեր պատմական ճակատագիրն է այդպիսին:

Նայելով մեր բանակին՝ մենք տեսնում ենք Հայաստանի մեծ ապագան և երկյուղածորեն ծնկի իջնում նրա աստվածային տեսիլքի առջև:

Միջոցառման վերջում «Հատուկ գունդ» հասարակական կազմակերպության

նախագահը աշակերտական խորհրդին շնորհեց պատվոգիր:

-6-

Մեր թոթովանքները

Ես ցանկացա նկարել

Իմ մայրիկին գեղեցիկ,

Որ նկարում նա ժպտա

Ու լույս սփռի ամենքին:

Իմ նկարում նա բարի

Ժպտում է միշտ բոլորին,

Չէ՞ որ այս մայր երկրի մեջ

Մայրերն են շատ սիրելի:

Սարգսյան Անի 3ա դաս.

Բոլոր նրանք, ովքեր ցանկություն ունեն համագործակցել առաջարկություններ, ստեղծագործություններ, հոդվածներ խմբագրությունը ուրախ կլինի համագործակցել ձեզ հետ:

Գարուն

Նայում եմ ես օրացույցին

Օրեր հաշված մնացին,

Փետրվարը երբ վերջանա՝

Պայծառ գարուն կարթնանա:

Գարնանային արև օրեր,

Նոր ծիլ տված ծնծաղիկներ

Ուրախ օրեր՝ արձակուրդներ,

Գեղեցկության երկու տոներ:

Գրիգորյան Էլեն 3ա դասարան

Թերթի խմբագրական կազմ՝ ղ
մասնագիտացված կրթական աջակցութ
դպրոցի ինֆորմատիկայի ուսուցչուհի Փ.Պողոսյան, հ
պատմության ուսուցչուհի

Նախորդ պարբերականի վիկտորինայի հարցերի պատասխանները

1.Ո՞րն է հայերի մարդաբանական տեսակը, ինչպիսի՞ն են նրա առանձնահատկությունները:

Հայերն ունեն իրենց մարդաբանական կերպարանքը, որը կոչվում է արմենոիդ, որի առանձնահատկություններն են կլոր, հետևում տափակ գանգը, ատամների որոշ ձևն ու կարգը, հայկական բնորոշ քիթը և այլն:

2.Ինչպե՞ս էին անվանում հայկական լեռնաշխարհը Միջագետքի հին բնակիչները՝ աքքադացիները:

Եփրատ և Տիգրիս գետերը Միջագետքի ժողովրդի կենսատու երակներն են եղել, երևի այդ է պատճառը, որ Միջագետքի հին բնակիչները՝ աքքադացիները հայկական լեռնաշխարհը անվանել են Նաիրի, որը աքքադերեն նշանակում է ջրերի երկիր:

3.Ո՞րն է Արա անվան արմատը և ի՞նչ է այն նշանակում:

Արա անվան արմատն է Ար-ը, ա-ն հայոց հին հոլովական վերջավորություն է: Ար. Արմատը բնիկ հայերեն այր բառից է ծագել և նշանակել է ուժեղ, տղամարդ, հայ: Այդ բառից է գոյացել Այրարատ, ապա՝ Արարատ անունը:

4.Արտաշեսյան դինաստիայի ո՞ր թագավորն էր, որ գլուխ չխոնարհեց Կլեոպատրայի առջև և գլխատվեց:

Գերեվարված Արտավազդ թագավորն ու իր ընտանիքը գլուխ չխոնարհեցին օտար թագուհու առաջ: Եվ Կլեոպատրան գլխատել տվեց հայոց Արտավազդ II թագավորին:

Տիգրանն արշավեց դեպի արևելք, ջախջախեց պարթևական զորքերը, թագավորին գրկեց արքայից արքա տիտղոսից և իրեն հայտարարեց արքայից արքա:

*6.*Հայոց ո՞ր մայրաքաղաքն է պատմական տարբեր ժամանակաշրջաններում ունեցել տարբեր անուններ:

Վաղարշ I-ը վարդգեսական առևտրաշատ ավանի տեղում հիմնադրեց նոր քաղաք, բայց հետո թագավորի անունով սկսեց կոչվել վաղարշապատ (այժմ՝ էջմիածին):

7.Հռոմեական ո՞ր կայսրը իր կնքած «ամոթալի» պայմանագրով մեծ վնաս հասցրեց հայ ժողովրդին: Ինչո՞ւ է այդ պայմանագիրը կոչվում ամոթալի:

363թ, Հռոմի կայսր դարձավ Հովիանոսը, որը մի տարի թագավորեց, բայց այդ տարվա ընթացքում հասցրեց Հայաստանին մեծ վնաս տալ: Նա 30 տարվա մի պայմանագիր կնքեց Պարսկաստանի հետ, որով պարտավորվում էր պարսկական արշավանքի դեպքում Հայաստանին չօգնել: Հաշտությունն այնքան նվաստացուցիչ էր, որ՝ հռոմեայի պատմիչ Ամիանոս Մարկեղինոսը այն անվանել է ասամոթալիս: